

յատկացուեցաւ առժամանակեայ շէնք մը, ժառ. Վարժարանի մէկ քանի սենեակներուն մէջ:

Տնօրէն ժողովը նախագահութեամբ Ս. Պատրիարքին, նկատի առնելով արդէն անբաւական ու վտանգաւոր կերպով խարխուլած ազջկանց վարժարանին վիճակը, անոր փոխարէն երկսեռ նախակրթարանի մը և մանկապարտէզի մը պէտքը շեշտելով որոշեց նոյն տեղւոյն վրայ և վանքին սեպհական յարակից սենեակներն ալ միացնելով նոր նախակրթարան մը կառուցանել արդիական պայմաններով: Ըստ այսմ կառավարութեան նոր օրէնքին համաձայն ճարտարապետին կողմէն յատկապէս մը պատրաստուելով Պատրիարքարանի կողմէն մատուցուեցաւ կառավարութեան՝ Կրթական և Առողջապահական վարչութեանց և Քաղաքապետութեան կողմէն վաւերացուելու համար: Նախակրթարանը պիտի շինուէր 37 մէթր երկար և 9 մէթր լայն գետնի մը վրայ, պիտի ըլլար եռաշարկ և պիտի պարունակէր 250-300 աշակերտներ: Շինութեան հրամանը տրուեցաւ պատկան իշխանութեան կողմէն և հիմերը սկսան փորուիլ. ժայռը և կոյս հողը գտնելու համար արտաքոյ կարգի աշխատանքի և ծախքի դուռ բացուեցաւ և չատ ժամանակ վատնուեցաւ, որովհետեւ հարկ եղաւ սպասել որ ներքին հիմերը դրուէին և բարձրանային հողէն դուրս, պաշտօնական հիմնարկէք կոտարելու համար: Հիմերը բաղձացուած բարձրութեան հասած ըլլալով 1928 Ապրիլ 26, ԵՇ. երեկոյ ժամ 5ին կատարուեցաւ Ազգային Երկսեռ Նախակրթարանի եւ Մանկապարտէզի հիմնարկէքի արարողութիւնը նախագահութեամբ Ս. Պատրիարքին: Հիմքին արեւելեան հիւսիսային անկիւնը կատարուեցաւ հիմնօրհնէքը. և փորուած անկիւնաքարին մէջ դրուեցաւ յիշատակարան մը, զոր շողախով լեցուցին Ս. Պատրիարքը և եպիսկոպոսները: Երկու տարիէն լրացաւ շէնքը. թէեւ բազմածախս՝ բայց ան եղաւ շէնք մը բարձրադիր, հոյակապ, օղասուռն, առողջապահիկ եւ պետական օրինաց եւ զիտութեան պահանջներուն համաձայն: Շէնքին հիմերը և պատերը շինուած են պերճունով և երկաթի կապերով հաստատուած են. ամբողջ ճակատը յղկուած քարերով հիւսուած է: Նախակրթարանին մուտքը բացուած է Ս. Հրեշտակապետ տանող ճանապարհին վրայ կողմնակի երկու քարէ սանդուխներով: Նախակրթարանը ունի երեք յարկ, ամենէն վերինը յատկացուած է ձեռագործի համար: Նախակրթա-